Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ նախագահ

_____ Ն. Խ. Սարիբեկյան

28 04 2022թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ավանդական բժշկության համալսարանի Ուսանողական Խորհուրդը (այսուհետ՝ ԱԲՀ ՈՒԽ) ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման ընտրովի մարմին է:
2. ԱԲՀ ՈՒԽ-ն ապաքաղաքական, ապակուսակցական և ներհամալսարանական կազմակերպություն է:
3. ԱԲՀ ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողների շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
4. ԱԲՀ ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:
5. ԱԲՀ ՈՒԽ-ն կարող է ունենալ անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ և իր գործունեությամբ և նվիրատվությամբ ձեռք բերած ֆինանսական միջոցները տնօրինելու իրավունք:
6. ԱԲՀ ՈՒԽ-ի լրիվ անվանումն է.
   - հայերեն՝ **Ավանդական բժշկության համալսարանի Ուսանողական Խորհուրդ,**
   - ռուսերեն՝ **Студенческий совет Университета традиционной медицины,**
   - անգլերեն՝ **Student Council of the Universiti of the Traditional Medicine:**
   - Իսկ կրճատ անվանումները. հայերեն՝ ԱԲՀ ՈՒԽ, ռուսերեն՝ СС УТМ, անգլերեն՝ SC UTM:
7. ԱԲՀ ՈՒԽ-ի հասցեն է՝ ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 38ա:

II. ԱԲՀ ՈՒԽ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԲՀ ՈՒԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով ներքոնշյալ նպատակներից՝

8. պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
9. ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը՝ ուսանողությանն առնչվող հարցերով,
10. մասնակցել համալսարանի կառավարման մարմիններում համալսարանի գործունեությանը վերաբերող այլ հարցերի քննարկումներին,
11. աջակցել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
12. իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին,
13. միավորել համալսարանի ուսանողությանը, նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացումը,
14. կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
15. մասնակցել ԱԲՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,
16. համագործակցել ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:
17. հնարավորության դեպքում իրականացնել հրատարակչական գործունեություն, սոցիոլոգիական և այլ կարգի հետազոտություններ, խորհրդատվություն:
18. ՈՒԽ-ն կարող է ձևավորել հանձնաժողովներ և կազմակերպել աշխատանքներ հետևյալ ոլորտներում՝
    - մշակութային, որի նպատակը ուսանողների բարոյահոգեբանական զարգացվածությունն է,
    - սպորտային, որի անդամների պարտականությունն է ժամանակ առ ժամանակ կազմակերպել սպորտային մրցույթներ և միջոցառումներ,
    - ժամանցային և հանգստի, որի հիմնական նպատակն է ապահովել ուսանողների հետաքրքիր ժամանցի կազմակերպումը,

- առաջադիմության, որի անդամները պետք է փորձեն մրցակցություն առաջացնել ուսանողության մեջ՝ ամեն կիսամյակ հոչակելով լավագույն ուսանող/ուհի,
- արտաքին կապերի և հարաբերությունների, որի անդամները պետք է կապ հաստատեն այլ բուհերի հետ՝ կազմակերպելով հանդիպումներ:

III. ԱԲՀ ՈՒԽ-ի կառուցվածքը, ղեկավար մարմիններն և այդ մարմինների գործառույթները

19. ՈՒԽ-ն ղեկավարում է ՈՒԽ նախագահը, որը
    - վարում է ՈՒԽ նիստերը, կազմակերպում է ուսումնական և ուսանողական կյանքի հետ կապված տարբեր քննարկումներ,
    - ռեկտորատ է ներկայացնում ՈՒԽ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվություն,
    - առաջարկում է փոխնախագահի և քարտուղարի պաշտոնները,
    - ՈՒԽ նախագահ կարող է ընտրվել ցանկացած ուսանող, ով ունի բարձր առաջադիմութուն և ուսումնառության տարիներին ցուցաբերել է կազմակերպչական ունակություններ:
20. ՈՒԽ-ի առաջին նիստում, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծա-մասնությամբ ընտրվում է ՈՒԽ փոխնախագահ, քարտուղար:

    ՈՒԽ-ն կազմված է՝

    ա) նախագահից

    բ) փոխնախագահից

    գ) քարտուղարից

    դ) ՈՒԽ անդամներից:
21. ՈՒԽ նախագահ ընտրվում է ՈՒԽ կազմից՝ գաղտնի քվեարկության միջոցով՝ երկու տարի ժամկետով: Սահմանված ժամկետը լրանալու կամ ԱԲՀ-ում ուսումն ավարտելու դեպքում ՈՒԽ նախագահը վայր է դնում իր լիազորությունները:
22. Փոխնախագահը նախագահի բացակայության դեպքում զբաղվում է նախագահի բոլոր գործառույթներով, իսկ նախագահի ներկայության դեպքում օգնում նրան:
23. ՈՒԽ նախագահության նիստերը վարում է ՈՒԽ նախագահը և արձանագրում է ՈՒԽ քարտուղարը:

24. ՈւԽ-ի կազմում ընդգրկվում են յուրաքանչյուր կուրսից մեկական ուսանող՝ ինքնաառաջադրմամբ կամ տվյալ կուրսի ուսանողների առաջադրմամբ:

25. ՈւԽ-ի քննարկման հարցերն են.

- քննարկել ՈւԽ-ի կանոնադրությունը,
- ընտրել ուսանողական խորհրդի նախագահ և նախագահի առաջարկությամբ ընտրել փոխնախագահ և քարտուղար,
- քննարկել տարեկան աշխատանքային պլանը,
- քննարկել նախորդ տարվա հաշվետվությունը:

26. ՈւԽ-ի նիստերն անցկացվում են տարեկան աշխատանքային պլանի համաձայն:

27. ՈւԽ նախագահի, ՈւԽ անդամի համալսարանն ավարտելու կամ այլ պատճառով ուսանողական իրավունքները դադարեցնելու, ինչպես նաև սեփական դիմումով ՈւԽ կազմից դուրս գալու կամ առողջական խնդիրների պատճառով իր լիա-զորությունների կատարումն անհնարին դառնալու դեպքում, անցկացվում են վերո-հիշյալ անդամի նոր ընտրություններ:

28. ՈւԽ կազմը համալրվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին:

IV. ՈւԽ-ի վերակազմավորումը

29. ԱԲՀ ՈւԽ-ն վերակազմավորվում է ԱԲՀ ՈւԽ անդամների 2/3-ի որոշմամբ: